

պէս չէ եղեր տիրողներուն, այլ բնիկներուն, ու Քիւրդերը իրաւունք ունին զայն կոչել իրենց պատմական հայրենիքը:

Պարզ բազդատու թիւն մը ցոյց կու տայ որ այդ ժամանակուայ Մարերն ալ այժմեայ Քիւրդերու պէս իրենց իշխանութեան կազմին տուել էին Յեղապետական ձեւ, որ կը կոչուէր «Քաղաքատէր» անունով: Պատերազմներն ու յափշտակութիւնները կը ցուցնեն Քաղաքակրթութեան չըջանի նախնական աստիճաններէն մէկը — Խաւճարածութիւնը, ուր կը գտնուին դեռ այժմեայ Քիւրդերը (թէ և նուազ մաս մը նոր անցած է երկրագործութեան): Պատերազմի հետեանքով եղած հարկատուութիւնը կը յատկացուի ոչ թէ ամբողջութեան մը, այլ զատ զատ առանձին ցեղապետներու, որոնք կը վճարեն բաւական խոշոր թիւ կազմող ընտանի անասուններու հօտերով, ու հարկատուութեան սխտէմը կը գործադրուի ընծայարեութեան դրութեամբ մը, ու դրուած հարկը կը կրէ «ընծայ» անուն. պարզապէս այն՝ որ կ'ընեն այժմեայ Քիւրդերը, բոլոր Քրդական հարկերը հաւաքելով կամ բունի ստանալով իրր «ընծայ»:

Նկատելի կէտ մ'ալ այն է, որ Մարաստան կը բազմանար Եկւորներով, ինչ որ զուցէ զանազան ցեղապետութիւններու բաժանումը՝ արդիւնքն է այդ պատճառին: Կը հետեւի թէ, իրենց բազմաթիւ աճեցականութիւնը կը պարտին եկուոր տարբերու իրենց մէջ ընդունելուն, որոնք ճանչցուած են Մար անուան տակ:

Այսօր Քիւրդերն ալ նոյն սխտէմը կը շարունակեն. արեւնակցական ցեղի մը մօտ կը կազմուի նաև տարարիւններէ կազմուած ցեղեր, որոնք խնամութեամբ աստիճան առ աստիճան կը նոյնանան և կը կոչուին Քիւրդ ընդհանուր անուան տակ:

Յամենայն դէպս, ասկէ զատ՝ հաստատ ոչ մի բանի չէ կարելի վերադրել Քիւրդերու այժմեայ աճեցականութիւնը՝ որ լայն ասպարէզ մ'ունի իր առջև, հանդէպ սեղմ, իր մէջ մնացող ու պլնդ ամփոփուող արեւնակցականներու՝ որոնք դատապարտուած են անուղղակի ոչ-աճեցականութեան: